ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ բուժաշխատողներ,

ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Բուժաշխատողի օրվա առթիվ: Հունիսի 21-ը բոլորիս համար կարևոր օր է, երբ պետք է կրկին արժևորենք կյանքեր փրկելու, առողջություն պարգևելու, հույս ու հավատ ներարկելու Ձեր մասնագիտական ու կարևոր առաքելությունը: Օրն այս լավագույն առիթներից է երախտիքի մեր խոսքը հղելու ձեզ, ևս մեկ անգամ գնահատելով բուժաշխատողի կարևոր դերն ու առաքելությունը հասարակության կյանքում: Պատասխանատվության բարձր զգացումով, մասնագիտական բարձր որակներով օժտված բուժաշխատողների ամենօրյա բարեխիղճ աշխատանքը կարևոր ներդրում է մեր բնակչության առողջության պահպանման գործում:

Սիրելի բուժաշխատողներ կրկին շնորհավորում եմ ձեզ՝ մասնագիտական օրվա առթիվ, մաղթելով մասնագիտական վերելքներ, անսպառ ուժ, եռանդ՝ ձեր հայրենանվեր և անձնազոհ աշխատանքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ